



# Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016

\*

MURRAY HILL 6-0710

ՍԻՈՆ ԱՐԲԵՎԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Archbishop Sion Manougian, Primate

Թիւ 11829

Մարտ 12, 1965

Հոգեշնորհ

Տ. Գարեգին Մ. Վրդ. Գազանեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ  
եւ Նախագահ Պատուարժան Միական Խորհուրդի  
Ուաշինկթըն.

Սիրելի Հայր Գարեգին,

Ստացած ենք Ձեր 1965 Փետրուար 25 թուակիր տեղեկագիրը, որով  
կը տեղեկացնէք թէ Ձեր Նախագահութեամբ՝ Փետրուար 21ին գումարուած  
Ձեր Տարեկան Միական Ժողովին մէջ կատարուած է Միական Խորհուրդի  
մասնակի ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը,  
կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Սկառի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական  
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը կատարուած  
է ըստ օրին, այսու կը վաւերացնենք հետեւեալները իբրեւ անզամ Միա-  
կան Խորհուրդի.

Տիարք՝ Գնդ. Զօրն Զրսցալեան  
Գասպար Գասպարեան  
Տիլիկ Օկուլեան  
Եղուարդ Օնանեան

Կը յանձնարարենք որ Միական Խորհուրդի նոր դիւանի անու-  
հասցէները Առաջնորդարան զրկէք առաջին առիթով:

Այսու, օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք  
Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունեու-  
թեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի Հոգեւոր շինու-  
թիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐԲԵՎԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Գանատայի